ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐՈՒ
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՓԲԸ

REPUBLIC OF ARMENIA
SHIRAK"S REGION
**GYUMRI MEDICAL CENTER**
**CJSC**

Հայաստանի Հանրապետություն
Գյումրի, Գ.Նժդեհի փ., 3/3
Էլ/հասցե՝ gyumrimc@gmail.com
Հեռ. - (0312) 3-03-11

Republic of Armenia
Gyumri st.G.Nzhdeh 3/3
E-mail: gyumrimc@gmail.com
Phone: (0312) 3-03-11

N 0894 «14» ապրիլ 2025թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## «ՌՈՒԲՇԻՆ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասը և ուսումնասիրելով «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված **«ՇՄԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/15»** ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) վերաբերող փաստաթղթերը՝ ստորև ներկայացնում եմ «ՌՈՒԲՇԻՆ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ-ին (հասցե՝ ՀՀ ք. Երևան Լենինգրադյան փողոց 31/1 42 բն. բանկ՝ «Այդի բանկ » ՓԲԸ , Հ/Հ՝ 11817071605400 , ՀՎՀՀ՝ 01306961, հեռ.՝ 033 39-38 90 գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը.

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված **«ՇՄԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/15»** ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «ՌՈՒԲՇԻՆ ԿԱՊԻՏԱԼ»ՍՊԸ-ն **1, 2, 3, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 25, 26, 27, 29, 31, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 42, 43, 44, 45, 46, 47, 48, 49, 50, 51, 52, 53 հետևյալ չափաբաժինների մասով : 11, 21, 35, 38, 50, 51, 53 մասով ճանաչվել է ընտրված մասնակից:** Արդյունքում 12.03.2025 թվականին ուղարկվել է պայմանագրի նախագիծ , սակայն սահմանված ժամկետում պայմանագիր չի ստորագրվել և մատակարարը հրաժարվել է 51- րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքել:

«ՌՈՒԲՇԻՆ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ - ն թույլ է տվել օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, այն է, որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքել:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը

հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ առկա են «ՌՈՒԲՇԻՆ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ-ին Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերությամբ նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, և որոշում եմ՝ «ՌՈՒԲՇԻՆ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ -ին ներառել նշված ցուցակում:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ որոշման պատճեն 14.04.2025թ. ուղարկվել է Ընկերության պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.procurement.am (www.gnumner.am ) հասցեով ինտերնետային կայքում:

Հարգանքներով՝ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ – ի տնօրեն Ա. Իսահակյան